Համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 27.09.2023 թվականի որոշման
Գործում է 28.09.2023թվականից

ԱՄIՕ - ԱՌԱՋՆԱԿԱՐԳ +

Ավանդային և Բանկային հաշվում առկա դրամական միջոցների ապահովվածությամբ ֆիզիկական անձանց տրամադրվող վարկային գծերի պայմաններն ու սակագները (սեփական ռեսուրսներով)

		Ավանդային հաշվում առկա դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծեր	**Ավանդային հաշվում առկա դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծեր արտոնյալ պայմանով**	**Բանկային հաշվում առկա դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծեր**
1.	**Վարկային գծի պայմաններ**			
1.2	Արժույթ	ՀՀ դրամ , ԱՄՆ դոլար , Եվրո		ԱՄՆ դոլար , Եվրո
1.3	Տարեկան անվանական տոկոսադրույք	**<u>ՀՀ դրամով ժամկետային ավանդների ապահովվածությամբ վարկային գծերի դեպքում՝</u>** • ՀՀ դրամով վարկային գծի դեպքում՝ Ավանդի տոկոսադրույք +3%, նվազագույնը 12% դրույքաչափ • Արտարժույթով վարկային գծի դեպքում՝ Ավանդի տոկոսադրույք +4%, նվազագույնը 11% դրույքաչափ <u>Արտարժութային ժամկետային ավանդների ապահովվածությամբ վարկային գծերի դեպքում՝</u> • ՀՀ դրամով վարկային գծի դեպքում՝ Ավանդի տոկոսադրույք +8%, նվազագույնը 14% դրույքաչափ • Նույնանուն արտարժույթով վարկային գծերի դեպքում՝ Ավանդի տոկոսադրույք +4%, նվազագույնը 10% դրույքաչափ	<u>Ավանդի նույն արժույթով վարկային գծի դեպքում՝</u> ՀՀ դրամ – 14% ԱՄՆ դոլար – 12% Եվրո – 10%	<u>Արտարժութային բանկային հաշվում առկա դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծերի դեպքում՝</u> • Նույնանուն արտարծույթով վարկերի դեպքում՝ Բանկայի հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույք +4%, նվազագույնը 8% դրույքաչափ
1.4	Տարեկան փաստացի տոկոսադրույք	8.3%-24%		
1.5	Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք	0%		
1.6	Ժամկետ	մինչև ավանդի ժամկետը, բայց ոչ ավել քան քարտի ժամկետը		12 ամիս
1.7	Վարկային գծի տեսակը	Վերականգնվող վարկային գիծ		
1.8	Վարկային գծի և տոկոսագումարների մարման եղանակ	Վարկային գծից մարումները՝ ամենամսյա պարտադիր մարումներ չեն սահմանվում, Հաշվեգրված տոկոսի մարումները՝ ամենամսյա	Ամենամսյա պարտադիր մարումներ չեն նախատեսվում	Վարկային գծից մարումները՝ ամենամսյա պարտադիր մարումներ չեն սահմանվում, Հաշվեգրված տոկոսի մարումները՝ ամենամսյա
1.9	Արտոնյալ ժամանակահատված կամ հավելյալ ժամկետ	-	50 օր, (օգտագործված վարկային գծերի վրա	-

			տոկոսադրույք չի կիրառվում այն դեպքում, երբ քարտատերը մինչև գումարի օգտագործմանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ մարում է նախորդ ամսվա վերջի դրությամբ օգտագործված ամբողջ գումարը)	
1.10	Վարկային գծի նվազագույն գումար	30,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	100,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	
1.11	Վարկային գծի առավելագույն գումար	Ավանդի նույն արժույթով վարկային գծի դեպքում՝ դրամական միջոցների 90%-ի չափով Ավանդի արժույթից տարբերվող վարկային գծի դեպքում՝ դրամական միջոցների 75%-ի համարժեքի չափով	5,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթը գերազանցող ավանդի դեպքում - մինչև ավանդի գումարի 10%-ի չափով	դրամական միջոցների 90%-ի չափով
1.12	Վարկային գծի տրամադրման եղանակ	Վարկային գիծը տրամադրվում է քարտային հաշվին		
1.13	Վարկային գծի վաղաժամկետ մարում	Թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չկան		
2.	**Բանկի միջնորդավճար**			
2.1	Վարկային գծի սպասարկման միանվագ միջնորդավճար	0 ՀՀ դրամ		
2.2	Վարկային գծի միջոցների կանխիկացում և քարտի սակագներ	Համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վարկային քարտի համար սահմանված սակագների	Միջնորդավճար քարտով ԱՄԻՕ ԲԱՆԿ-ի բանկոմատներից և կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման համար՝ 1% Քարտի մնացած սակագները՝ համաձայն բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վճարային քարտի՝ արտոնյալ ժամկետով վարկային գծերի համար սահմանված սակագների	Համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վարկային քարտի համար սահմանված սակագների
3.	**Ապահովվածություն**			
3.1	Գրավի առարկա	Ավանդային հաշվում առկա դրամական միջոցներ	Ավանդային հաշվում առկա դրամական միջոցներ (սառեցվում է վարկային գծի սահմանաչափի 120%-ի չափով)	Հաշվում առկա դրամական միջոցներ
4.	**Վարկառուի նկատմամբ պահանջներ**			
4.1	Վարկառու	18 տարին լրացած ֆիզիկական անձ-քարտապան		
5.	**Լրացուցիչ պայմաններ**			
5.1	Դիմում-հայտի մերժումը	• Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկային գիծ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր: • Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը:		
5.2	***Վարկառուի կողմից պարտավորությունների***	***Մինչ 15.10.2023թ. տրամադրված վարկերի դեպքում՝***		

	չկատարման դեպքում	• ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,*** • ***Վարկը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար*** ***15.10.2023թ.-ից հետո տրամադրված վարկերի դեպքում՝*** ***Բանկն իրավունք ունի՝*** • ***Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:*** • ***Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց վարկի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար***
		Վարկառուի կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն 7 աշխատանքային օր հետո այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձեվավորվում է վարկառուի վարկային պատմությունը: վարկառուն իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը: **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝**վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:
		Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն
5.3	Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ
5.4	Հաճախորդի այլ ծախսեր	բացակայում են
5.5	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	1 աշխատանքային օր
5.6	Վարկի ձևակերպման վայր	Բանկի Գլխամասային գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում (բացառությամբ Կումայրի)
5.7	Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր	✓ անձնագիր կամ նույնականացման քարտ ✓ սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում), ✓ այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

<u>Զգուշացում՝</u>

Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք չկատարեք կամ ոչ պատշաճ կատարեք վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները եվ վարկի տրամադրման եվ սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում եվ չափերով կատարելու դեպքում: տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգին կարող եք գտնել **ԱՅՍՏԵՂ:**

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.
Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)
A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)
n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը
N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով
i –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

<u>Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ</u>.

- Վարկային գծի օրինակ- 1,000,000 ՀՀ դրամ
- Ժամկետ – 12 ամիս
- Տարեկան տոկոսադրույք – 12.5%
- Վարկային գծի միջոցների կանխիկացում՝ 0.3%

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 13,9 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը՝ այդ մասին առնվազն 7 օրացուցային օր առաջ ծանուցելով Վարկառուին՝ վարկը նպատակային չօգտագործելու, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները չիրականացնելու դեպքում:

<u>Ուշադրություն՝</u>

Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

<u>Ուշադրություն՝</u>

Վարկառուն իրավունք ունի հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ իր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից եվ ապահովում է գաղտնիություն:

Ֆինանսական տեղեկատու՝ www.fininfo.am

<u>Ուշադրություն՝</u>

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»:

Բանկի վերաբերյալ տվյալներ.

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.amiobank.am, Էլ. Փոստ՝ info@amiobank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: